


ՀԻՆ ՀԱՒԱՏՔ



ԳԼ. Թ. - ԳԻՔ. - ՊԱՇՏՈՆ ԶԱՍՏՈՒԱԾՈՑ

(Shu հտ. ԾԲ. յէջ 529).



ԲԶԱՓ այլ ողջամասաց անհնա-
րին կ'երեւի՝ թէ մէկ և միայն
գերագոյն էակէն զառ՝ կարենայ
մարդ ուրիշ էակ այլ Աստուած
անուանել, հարկ կ'ըլլայ զիւ-
նիլ՝ թէ հեթանոսաց զբաւոր վը-
կայութեամբ և թէ դեռ ֆնա-
ցեալ հեթանոսաց ըսածէն և ըրածէն, որ
կամ մոլորութեամբ կամ ռովորութեամբ ընդ-
ունած և կոչած են այլ եւ այլ աստուած-
ներ և աստուածուհիներ, ըստ մեզ՝ չաս-
տուածներ, մեծ ու պզտիկ. որք հասարակ-
օրէն մեր լեզուաւ յոցնակի ձեւով՝ Գիք կ'ը-
սուին, իզականքն Գիցոռահիք, զուց և Աշիձ է.
անոնց պաշտօնն Գիցապաշտութիւնն. անոնց
պատկերներն այլ քարէ, կաւէ, պղնձէ կամ
որ և է նիւթէ, շինութեան կերպին կամ
արուեստին նկատմամբ՝ Գրոշեալ և Կոռք կո-
չուին, յորմէ Կոսպաշտութիւնն է ի Ս. Գիրս
յիշուած Թեոքափք կամ Թեոքափիմք՝ երբայա-
կան բառք՝ անական կամ պահպան չաստուած-
ներ նշանակեն։ Այս անկարծելի և զրծ-
բաղդաբար ստոյգ և շատ ընդհանուր եղած
մարդկային ամենէն անարգ մոլորութեան, ի-
բաւ որ զարմացմամբ հարցանելի է ծագումը,
ինչպէս որ ըրաւ և մեր վանական վարդապետն՝

հարց ու պատասխանով. շատ Ս. Հարք և
բարոյագիրք եւս պէսպէս ըսած են։ Մեր՝ հին
մոլորութեանց ղէմ գրող հեղինակն Եզնիկ՝ իրմէ
հիներուն հետեւելով՝ այսպէս կ'ըսէ. « Հե-
» թանոսութեան սկիզբն ի Սերուբայ ժամա-
» նակաց անտի եղեւ. զի՝ որ լաւ ոք եկեալ
» յաշխարհ՝ մեռանէր, վասն յիշատակի քա-
» յութեանն՝ զպատկերն երանօքք նկարու
» հանէին. և անտի ուսեալ ախմարաց՝ տա-
» կաւ ի պաշտօն տաճոյին. և Կոռք և Գրո-
» շիւղց հանգամանք՝ առ Թարայիւ հարք Ա-
» բրահամու... և կարգեալ հասանէր յԵզնիկ-
» տացիս և ի Բաբելոնացիս և ի Փոնիգա-
» ցիս և ի Փիւնիկեցիս՝ գործ դրոշագործու-
» թեան և խորհուրդք նորին. ապա ի Հել-
» լէնսդ՝ որ են Յոյնք՝ առ Կեկրոպաւ, և
» եւս յետոյ ազաւել սաստիկ առ Կոռնաւն
» և Թէաւ և Դիաւ և Ապոլոնիւ, և առ
» այլովք բազմօք, զորս մի ըստ միովէ աս-
» տուածս անուանէին »։

Ինչպէս առաջ յիշեցինք, թէ և ըստ վա-
նականի՝ օտարաց մէջ մտնելէն հարիւր տարի
վերջը մտեր է դիցապաշտութիւնն ի Հայս,
այլ շատ աւելի ուշ կարծեմ. Եզնիկայ պէս
վարդապետ մ'այլ յիշելով այն ազգերն որ
մի ըստ միովէ մոլորեցան, և առջիններուն
վրայ աւելցընելով զՄարո և զՊարս, շատ
եաքը կ'ըսէ Ասորիք. ասոնցմէ այլ շատ եւս-
քը, « Յաւուրս Արտաշէսի (Ա) որդւոյ Ար-
» շակայ՝ ի Հայք կանգնեցաւ պատկերն Արա-
» մազկայ »։ Անշուշտ հետեւի սա Խորենացոյ
պատմութեան՝ այդ Արտաշիսի աշխարհակալու-

1 Ոչ շատ հին խրատական գրուած մի կ'ը-
սէ, թէ տասնաբանայ պատուիրանաց առա-
ջինն կ'արգիլէ զհաւատացեալն, « որ Կոռք և
Արեմայ բարեւ ոչ տայ »։ Հասարակօրէն՝ ազիճ
նշանակէ լիտի ազիլի։

թեամբ ի Բունաստանէ բերած կոոց, զորս իր որդին Տիգրան կանգնեց այլեւայլ քաղաքացի մեկնից մէջ։ Բայց առնցիմէ առաջ իւրենց ցեղապետն վաղարշակ, ըստ նոյն պատմութեան, զանգատելով առ եղբայր իւր Արշակ թագաւոր Պարթեւաց՝ զրէր, թէ ի Հայս չկային « և ոչ մեհենից պաշտամունք » օրինաւոր, իր իսկեքն յարմար։ Եւ ինքն նախ կանգնեց Արեգական և Ղուսի անձնակերպ կուռք, յետոյ և իրեն նախնեացը։ Այս յիշատակէն շատ հաւանական է՝ որ Հայք թէ և վեհեր ունէին և պէսպէս հաւատ ու պաշտօն, ինչպէս տեսանք, բայց Բունաց և այլոց ու մանց նման կուռք չունէին։ Եւ Արշակունիք եղան զից մտցընողք ի Հայս, մանաւանդ այդ երկուցն (Արտաշէս և Տիգրան), ոչ այնքան կրօնական՝ որքան գեղեցկական զգացմամբ, թանկ և ճարտար ձեռագործեր կուգտուելով ի Բունաստանէ և հարկաւորներու լով իրենց գանձը և երկիրը։ որոյ մեծ հաւատարմն է՝ կոոց հետ անոնց պաշտօնեայքն այլ՝ այսինքն փութմբը՝ մէկտեղ բերելն։

Աւարառութեան և գերելարութեան ոգւոյ հետ՝ Տիգրան և իր որդին Արտաշէս զգաւորութեան և գեղեցկիկ դպրութեանց ճաշակ ունէին, նման ուրիշ քանի մի արեւելեան թագաւորաց՝ պարծանք համարելով Բունասէր (Ֆիլիսթինոս) կուռքիւ և յունարէն լեզուի հետ՝ յունարէն կրօնքն այլ ծառայեցին ի Հայս։ Ասոնք այլ քիչ քիչ նորութիւնէ և հանդէսներէ զրդած՝ աւելի կամ պակաս ընդունեցան նոր կրօնք և նոր շատուածք, մանաւանդ ուր անոնց վրայ իրենց հին հաւատոց նմանութիւն մի գտան։ Եւ աւելի չար, իրենց վրայ նոր տիրողներուն այլ տոկպուեցան գործողն պատիւ տալ, կամ սոքա կու պահանջէին այնպիսի պատիւ։ Ինչպէս, եթէ ստոյգ և զրուածն, նոյն ինքն վաղարշակ՝ իր եղբայրը կ'անուանէր՝ թղթին մէջ՝ « անձն » և պատկեր մեր աստուածոց... (և) երեւ լեւի բնակութեամբ ի մէջ զից »։ Այդ և այլոր նման պատկերները կոտորուեց փշրեց Արտաշէր Սասանեան՝ երբ նուանեց զՀայս, յետ մահուան Ա խոսրովու։ Սորա որդին Մեծն Տրդատ իր հրովարակին մէջ ի հեթանոսութեանն՝ յիշէր առ ազգ իւր՝ ողջունե-

լով. « Եւ ի մեր Դիւցախասն Պարթեւաց՝ » հասցէ այցելութիւն, ի փառաց թագաց »։ Ըստ պատմութեան ազգիս մերոյ՝ նոյն վաղարշակայ ժամանակ հանդիպած է և ազնուական Հնդկաց ոմանց փախտեամբ զայն ի Հայս, իրենց շատուածովք և սպասօնէիւք, և թագաւորին հրամանաւ բնակիլն ի Տարօն, և իրենց ազանդը տարածելն։ Եւ այսպէս երկու երեք նոր հաւատք, պարթեւական, յունական, հնդկական խառնին հայկականին հետ, քրիստոսէ առաջ և Ա դարուց կիսուն մի շրջ. և եթէ ստոյգ ըլլար պատմութեան՝ նա եւ ասորականն կամ եգիպտական. և այն միշտ ի կ'երեւին կամ աւելի շատ կ'երեւին՝ շատուածք ի կաածոյս (կուռք)։ որոց՝ առաջ քիչ ըլլալն գուշակութիւն անոնց գիտաւոր պաշտօնարանն թագաւորանիստ քաղաքի մէջ ըլլալէն, և թագաւորին հետ քաղքէ քաղաք փոխադրուելէն։ մէկ մ'այլ քանի մի յատուկ տեղերէ, ինչպէս Բագրատն, Յադախատ, և այլն, ուր իրեն ուխտատեղեաց կ'երթար քաղմութիւն ժողովրդեան՝ մեծ տօներու ասեռն։ Դարձեալ, իբրեւ յատուկ Եօթն Բագիկնք մեհենաց յիշուին, իբրեւ մեծ զից և պաշտամանց. և յետ Տրդատայ մինչեւ հիմայ՝ կոոց մնացած մի չէ գտուած ի Հայս, բաց ի քանի մի տարի առաջ Սասանայ քուլերը գտուածէն։

Մեր նախնեաց զինգապաշտական կրօնից վրայ շատ անանդութիւն չունիմք, բայց շատ հաւանական է որ լեզուաւ մերձաւորաց հետ կրօնից այլ մերձաւորութիւն կար։ Ստարածն վկայէ՝ թէ ինչ որ Պարսք կու պաշտէին՝ ըզնոյն և Մարք և Հայք. իսկ երբ յունական կուռքերն այլ մտան ի Հայս, մերոնք ոչ իբրեւ նոր աստուածներ ընդունեցան՝ այլ իրենց ճանցածներուն յարմարցուցին։ զոր օրինակ. Դիուք՝ Արամազդայ, Արտաշէսը՝ Անահտայ, Արտաշէսէն՝ Անդական, Հերակլըն՝ վահագնի, և այլն։ Բայց հարկ է թէ նմանք՝ այլ ոչ համանմանք ըլլային. վասն զի իւրաքանչիւր ազգ իր առանձին հայրենի կարծիքն և անործական ունէր. նոյն իսկ Յոյնք և Հռովմայեցիք՝ որ զնոյն շատուածս պաշտուէին, տարբեր գաղափար ունէին։ նա եւ նոյն մէկ ազգի և լեզուի ժողովուրդն՝ այլ

եւ այլ կողմեր՝ այլ եւ այլ։ Այս անկէ այլ յայտ է՝ որ մի եւ նոյն շատուածն՝ զանազան անուններ կամ մականուններ ունէր, սկսեալ իրենց ամենամեծ Արամազդէն. որոյ համար մեր խորենացիին այլ կ'ըսէ (Ա, 1Ա) թէ Եղգողին համեմատ՝ ոչ մէկ՝ այլ չորս Արամազդ կայ, մէկն այլ Եղունտ Արամազդ. (ո՞րն է). չորսին վրայ չորս այլ կ'ըրնայ աւելցուիլ կամ բազմապատկիլ։ — Զուգելով երկարել այսպիսի խորհրդածութիւններ՝ յիշենք մեր նախնեաց բնիկ կամ օտար անուամբ պաշտած շատուածները, սկսեալ վերջի յիշուածէն, որ է

ԱՐԱՄԱԶԴ. — Սովորաբար մեր նախնիք երբ իբր յունական շատուած յիշեն զա՛մ Դիոս կոչեն, այս անունս մօտ է բուն Աստուած նշանակող յունարէն Թէոս, Θεός, յատկաբար Դէոս, Deus անուանց։ Երբեմն թարգմանութեանց մէջ յայտնեն զայս. ինչպէս, Ոսկիբերանի Տիտոսի Թղթոյ Մեկն. « Դիոս, զոր Հայք Արամազդ ասեն... Զեւ » զոր եւ Դիոսն կոչեն, եւ հայերէն Արա՛մազդ՝ երբ կենաց տուող կամ պահպան իմանան, իրենց շնորհ կեանք բառով։ — Լատինք բարոյփին տարբեր անուն մի կու տան Արամազդայ, Jupiter, յորմէ եւ փռ. և իտալացիին՝ Giove. յայտ է որ Լատինք իրենց յատուկ մեծ շատուածը յարմարցուցեր են Դիոսի, ինչպէս Հայք այլ զԱրամազդ։ — Այս անունն հասարակ է Հայոց եւ Պարսից. սոքա համառօտելով Որմիզդ կ'ըսեն, ըստ մեր նախնեաց լեզու, իսկ իրենց նախնիքն կամ Զրադեշտականք՝ կ'ըսէին զանդիհեհն՝ Ահռաշտ—մագդառոյ, զոր թարգմանեն մեծիմաստ¹, կամ իմաստնոց տէր. Թէ՛ Պարսք Թէ՛ Յոյք Թէ՛ Լատինք՝ Ժամանակի որդի կամ ծնունդ համարին զնա. ծնողը՝ իրաքանիւր ազգ իր լեզուով կոչէ. Յ. Եղոնոս, Լ. Սատուանոս, Պ. Զարուանա—տխերանա, որ նշանակէ Անահանան ժամանակ։

Եթէ ի սկզբան՝ Հայք համակարծիք էին Պարսից, երբ յունական շատուածներն ընդունեցան, կարծիքն այլ խառնուեցան եւ հելլենացան. որչափ ինչ Ազաթանգեղոսի եւ Խոռենացոյ յիշածներէն կ'իմանամք, Արամազդ կ'ըլլայ եւ արարիչ երկնի եւ երկրի, եւ հսոյր Դիցն ամենայնի, իբր բացարձակ գերազոյն էակ եւ աստուած, եւ ըստ այսմ՝ հզօր եւ ամենազօր. Տրդատ երեք անգամ յիշելով զնա, միշտ Արիւն Արամազդ կ'ըսէ, միանգամայն եւ աստուածամկտը ինամոզ աշխարհի՝ տալով յիւսիսն պարարտութեան։ Ըստ այսմ՝ կրնան նոյն ըլլալ տարբեր անուամբ, Անահանայ դիքն այլ՝ ամենաբեր պտղոց. մանաւանդ որ այսոր հետ զուգին եւ վանատուր Դիք, ինչպէս որ Արամազդ այլ այսպէս ճանչցուէր՝ ի Սպարսա եւ ուրիշ տեղ. եւ ինչպէս նախնիք մեր՝ Մակաբայեցոյց Բ գրոց (Ձ, 2) յունական Դիոս քսենոսը (Ξένιος), թարգմաններ են « Հիւրասէր Որմզդական Դիցն վանասրի »։ Բայց թերեւս անելի հաւանական է՝ թէ հին Հայք տարբեր շատուած մի համարէին զԱմանորաբերն, իսկ թարգմանիչք զուգեցին Յունաց վանատուրին հետ։ Ասոնց աւանդութիւններն Արամազդոյ վրայօք՝ ոչ հարկաւոր են մեզ, եւ ոչ արժանի յիշելու. շատ ըլլան մեզ Տրդատայ ցուցած Արիւն և Լիացուցիչն. թող մնան Յունաց իրենց առասպելքն, եւ ոչ մէկու՝ այնպիսի դիցահօր խաղաղանկութիւններն։

Արամազդայ գլխաւոր մեհեանն ի Հայս՝ էր յամուր Անի՝ ի Դարանաղեաց պաւտի Բարձր Հայոց, մօտ յեղնկա. Արտաշէս Ա՛յայ Յունաց ամենամեծ շատուածոյն ամենաշքեղ կերպարանն, որ էր « Ոլոմպիական պատկերն », այսինքն իր գերազոյն զանուն՝ Ոլիմպոսի վրայէն հսկաները շանթահար ընելու արիական կերպիւ քանդակեալը, իսկական արութեամբ իշուց զրկեց ի Հայս. իր որդին Տիգրան այլ՝ կանգնեց յԱնի, մինչ ուրիշ շատուածներն այլ սփռեց յայլուայլ կողմ՝ եւ քուրմերն այլ զբաւ՝ իրենց գերեալ դիցահօր պաշտօնեայ։ Հայոց մեծագոյն աշխարհական՝ Հերակլի պատկերաց մէջ Սկիւլէայ եւ Դիպիլոսի ճարտարագործեալն ընտրեց. արդեօք իր օտած Արամազդն այլ փի-

¹ Արդեօք ըստ ոյսմ ձայնի եւ նշանակութեան՝ կրնանք հայերէն այլ ըլլալ Յահռաթիւնաստ։

գիտասայ հրաշակերտն չէր, կամ գոնէ Կիւպ-
սեւելայ ոսկեղէն ձեռագործն — Իր անուանա-
կիցն Բ Արտաշէս՝ իր Մաժան որդին քրո-
մապետ կարգեց այս տեղ: Լուսաորիչ՝ յա-
ռաջ քան զերթալն ի Կեսարիա՝ Լախնախեց
զայն՝ բազնին հետ, և ի տեղը կանգնեց ըզ-
թաշն, դեռորնն այլ՝ Թագաւորական հրամա-
նաւ սեփականեց եկեղեցւոյ: Այսոր համար
կ'ըսէ Անանիա Վ. եկեղեցւոյ զիմօք. « Դու
» և զԱրամազդական սուտանունն այն զդի-
» ւաբնակն պատկեր՝ զդիւանանն Դիոսի-
» կործանեցիր. և զառ ի նորայն բնակեալն
» բազնի զդիւապն բազմութիւն՝ արտահա-
» ւածն արարեալ, անդր եւս քան զԷդիպա-
» սեանն բնակեցուցեր զերամբ »: — Ու-
րիշ տեղ ի Հայս չի յիշուիր Արամազդայ մե-
հեան, բայց ինչ որ յիշեցնիք ի Պաշտոյ լերին
(Տես հա. ԳԲ. 103) տունն Արամազդայ, ուրիշ
չաստուածոց և աստուածացեալ կրօնի հետ,
զորս խափանեցին Ս. Հովսիսիմեանք: — Ասոնց
բնկերնեռէն մէկն, ծանօթն Ս. Նունէ, ի
Վրաստան երթալու ատեն՝ Զաւախաց զա-
ւառի մէջ փառաւան լինի քով՝ ձկնորսաց
հանդիպեալ, որը կ'երգնուին յԱրամազդ և
ի Զադեն. որով թուի թէ կամ մօտ ի տեղն
սգոնց մեհեանն կար, կամ գոնէ հօտ այլ
կու պաշտուէին: Նոյն Ս. Կուսին համար
կ'ըսուի, որ և ի Մծիխիայ քաղաքի՝ « կոր-
» ծանեաց զԱմպրոպային պատկերն Արա-
» մազդայ, որ կայր մեկուսի ի քաղաքէն,
» գետոյն հօրի (կուր) ընդ մէջ անցանելով,
» զոր սովոր էին երկրպագել այգուն այգուն ի
» տանեաց իւրաքանչիւր, զի հանդէպ նոցա ե-
» լեւէր. իսկ եթէ որ զոհել կամըր՝ անցեալ
» ընդ գետն՝ առաջի մեհեանիցն զոհէր »:
Այս յայտնէ որ շատ մեծ պատկեր կամ
անդրի մ'էր վերոյիշեալ շանթաձիգ Արա-
մազդայ, գուցէ նոյնպէս ի Յունաստանէ բե-
րուած, և մեհեանէն դուրս հրապարակի մէջ
կանգնած:

Յունաց առասպելը իրենց պիղծ Արա-
մազդայ շատ զաւակներ կ'ընծայեն. մերոց
գիցարանութեան մէջ ծանօթ են՝ որդի մի,
Միհր, և երկու գիցուհիք, Անահիտ և Նա-
նէ. միւս չաստուածոց ծնողք չեն յիշուիր,
գուցէ սոյն ինքն ըլլայ. իսկ ասոնց մայր

կամ կին Արամազդայ՝ բնաւ չի յիշուիր.
գուցէ Որմզդայ պէս անմայր ծնան, և սա
այլ ըստ Պարսից՝ անկին էր: Յայտնի սեալ
կամ պակաս է մեր ճառերտրաց մէջ Ս. Թա-
գէի պատմութեան մէջ յիշուած սատանայի
մեղադրանքն առ Հայս, զի թողին և զմեծ
» աստուածն Անահիտ և զմայր? աստուա-
ծոցն Պիսիդիան »: — Արամազդայ ասոն
թուի թէ Ամանորայ հանդիսից օրերուն կա-
տարէին Հայք, ի Նաւասարդի, Յոյնք՝ իրենց
Թարկիլիոն ամսոյն եօթին:

ԱՆԱՆԻՏ ԴԻՑՈՒՆԻ — Սեփականագոյն և
սիրելագոյն ի գիւ Հայոց, օրոյ պատշաճեալն
առ Յոյնս է Արտեմիս, Ἀρτεμις, առ Լա-
տինս Դիանա, Diana. Թէ ի՞նչ համար-
մունք ունէին Հայք՝ այսոր վրայ, լաւ բա-
ցատրէ Տրդատայ ըսածն (ըստ Ալաթ.) առ
Լուսաորիչն մեր. « եթէ ոչ յանձն առնու-
» ցուս զիցն պաշտօն մատուցանել, մանաւանդ
» այսմ՝ մեծի Անահայտի տիկնոջ, որ է փառք
» ազգիս մերոյ և կեցուցիչ, զոր Թագաւորք
» ամենայն պատուեն, մանաւանդ Թագա-
» տրն Յունաց՝ որ է մայրն ամենայն
» զգաստաբեանց, բարերար ամենայն մարդ
» կան բնութեան, և ծնունդ է մեծի Ա-
» րին Արամազդայ... Մեծն Անահիտ՝ ու-
» րով կեայ և զկենդանութիւն կրէ երկրս
» Հայոց »: Հրովարտական այլ յետ լիու-
թեանն Արամազդայ՝ մաղթէր Հայոց « Խը-
» նաւակաւորքիսն յԱնահիտ տիկնոջ »:
Ուրեմն փոխանակ կնոջ Արամազդայ՝ այս
գուտորն էր մեծ դիցունին և Տիկին Հայոց,
իբր տիրուհի և մայր նոցա. Թերեւս իբրեւ
Աթենասն Յունաց՝ Արամազդայ ուղեղէն ծը-
նած է կոյս մնացած: Բայց արդեօք այնպէս
կարծէին ամենայն Հայք, թէ կնութեան
կարծիք այլ ունէին, ինչպէս և քրիստոնեայ
զրիշք Յայսմատրաց՝ փոխանակ տիկնոջ զը-
րեն, « Իզական պատկերն Անահայտի՝ կնոջն
Արամազդայ »: սակայն Տրդատ միայն գուտար
Արամազդայ կու ճանչնայ զնա, և բարդակն
« Մայր՝ ամենայն զգաստութեանց », Արտե-
մեայ և Աթենասայ Յունաց միանգամայն
հաւասարեալ՝ կուսութեամբ և իմաստութեամբ:
Այս շնորհաց վրայ կ'աւելնան և խնամակա-

լուծիւնն, բարեբարութիւնն, և միով բանիւ կեանք և կեցուցիչ ըլլալն ազգին և երկրին. որով ոչ այն երկու յոյն պիցուհեաց՝ այլ և կիւրեղէի և այլոց բարի բարի շնորհներով զարդարած էին Հայք իրենց մայրախնամ Անահիտը: Այսոր համար հիմայ քննիչ տա- բակուսին Անահայ իսկապէս ի՛նչ ըլլալուն, իր կենդանատուր զօրութեան հաւաստիք տայ պատմութիւնն, Բ Արտաշիսի հիւանդութեան ատեն ուխտաւոր մի (Արեգ Արեղեան) խա- բեւն յերթեա, ձեր զիցուհայն մեհեանն էր, առողջութիւն խնդրելու կենտասէր Թագաւորին. բայց յառաջ քան պեսպանին դարձը՝ մեռաւ Թագաւորն, Նաւասարդի օրերը, ա- ռաւօտեան բարակ մէջն ու մուխը և իր օր- բական որսերն երազելով:

Երողոտոս պատմիչ՝ արեւելեան ազգաց զից մէջ՝ Անահիտ չի ճանչնար, զոնէ այս անուամբ, այլ յիշէ Ալիդդա կամ Ալիդադ՝ որ մօտ է Անահիտ անուան (չօրդութեամբ և և ի տառից), և յԱրաբացոց պաշտօնած Ուրանիա-Աստիկին է կ'ըսէ, զոր Պարսք Միտրա կոչեն. ոմանք այս անունս Միհր կարծեցին, բայց հմտագոյնը համարին Մա- տեր, այսինքն Մայր: Պարսք Նավիտ կոչէին և կոչեն Ուրուսեակը, որ Աստղեան նուի- բուած լուսաւորն է, և երկրի պահապան կամ խնամակալ 28 ոգւոց կամ Ազատաց

մէկն համարուէր, և իրենց Ուշեղ Արտա- շէս Թագաւորին ժամանակ՝ անձնաւորեալ պատկերակերպ ընծայեցաւ. բայց անկէջ շատ առաջ այլ (իբր 600 տարի քան զՔրիստոս) երբ Պարսք և Մարք և նիզակակիցքն՝ հա- լածեցին զՍկիւթացիս կամ զՍակս յարեւ- մուտեան Ասիոյ, և Սակեան ըսուած տօները հաստատեցին, զլիւստր պատիւ և պաշտօն ընծայեցին Անահայ, զոր նոյն իսկ և Սակք պաշտէին, բաւ ոմանց և Անահիտն՝ Սա- կեան կոչուէր. կան և մեկնիչք Ս. Գրոց որք Անահայ համար կարծեն Երեմիայ մարգարէին ըսածը (Եր. 41). « Զիսրդ » ի պարտութիւն մասնեցար, Սիսակ, և » անկար յորս, պարծանքդ ամենայն երկ- » րի »: որպէս թէ զԲաբելոն փոխանուա- նելով իր պաշտած չաստօնածոյն կոչմամբ, բայց բաբելոնացոց պաշտածն օտլորաբար Միա- լիստա կոչուի, որ նոյն է Երողոտեայ Ա- լիդդա ըսածին. նոյն և Ասորոց ու ֆիւնի- կեցոց Աստարտն. նոյն և կիւրեղէ՝ դուստ- րըն երկնից և երկրի և կին Սատուռնոսի, միով բանիւ ամենն այլ Բնութեանն ոգի կամ շատուած նշանակեն: Մեր վշանական վ. այլ այսպէս համարի. « Աստարան՝ Սիգու- նացոց ամօթն է, զոր Քաղզէացիք Աստղիկ ասեն՝ Յոյնք Ափրոդիտես, Հայք՝ Անահիտ », երեք զիցուհիքն այլ միացընելով:

(Շարայարեհ)

